«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՈՒՄ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ
ԱՌԱՐԿԱ	ԴԱՍՎԱՐ
ՀԵՂԻՆԱԿ	ՆԱԳԻՄԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԱՐՄԵՂՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ	Մ.Գ.Դ., ԴՈՑԵՆՏ, ՌԲԱ ՊՐՈՖԵՍՈՐ՝ Ա□ ԾԱՏՈՒՐՅԱՆ
ՄԱՐԶ	ԼՈՌԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՌՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 2022

Բովանդակություն

1 Ներածություն

2 Խոսքի զարգացման մեթոդիկայի գիտական հիմքերը

3 Բանավոր խոսք

4 Բանավոր խոսքի զարգացում

5 Բանավոր խոսքի զարգացման մեթոդները տարրական դասարաններում

6 Եզրակացություն

7 Գրականություն

1 Ներածություն

Երեխաների խոսքի զարգացումը կապված է երեխաների անհատական առանձնահատկություն- ներից, տարբեր է նաև նրանց խոսքի զարգացման ընթացքը: Երեխաների մի մասը ուշ է խոսում, ոմանք հասկանում են շրջապատի խոսքը, բայց չեն արտահայտվում: Երեխայի խոսքը ամենից առաջ զարգանում է շրջապատի հետ հաղորդակցման ընթացքում: Ուստի կարևոր է շրջապատող մարդկանց գրագետ, ճիշտ խոսքը, երեխայի խոսքի ձևավորման ղեկավարումն ու վերահսկումը:

Երեխայի բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևը՝ բնական հաղորդակցումն է: Դրա համար պետք է երեխայի համար ստեղծել բնական հաղորդակցության ձևեր: Երեխայի ցանկացած գործունեության ժամանակ պետք է քաջալերել երեխայի արտահայտվելու ցանկությունը, հնարավորություն տալ երեխային ազատ, անկաշկանդ խոսելու, քանի որ, որքան մեծ է երեխայի արտահայտվելու, խոսելու ցանկությունը, այնքան մեծ է նրա խոսքի հղկված լինելը:

Խոսքի զարգացման գործընթացում առանձնապես շեշտադրված է երեխաների հաղորդակցման լիիրավությունը, շրջապատի մարդկանց հետ հարաբերությունները կարգավորելու ունակությունը, հնչյունային մշակույթի զարգացումը ինչի կարիքն առանձնապես շատ ունեն ժամանակակից երեխաները:

Խոսքը՝ որպես հաղորդակցման միջոց, զարգացման, շրջապատող աշխարհի մասին երեխաների պատկերացումների ընդլայնման, բառապաշարի հարստացման համար պետք է ստեղծել երեխայի համար զարգացնող միջավայր, խրախուսել երեխայի հաղորդակցման փորձերը, ընդգրկել երեխային զրույցի, երկխոսության մեջ:

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյա են ներխուժել համակարգչային նորագույն խաղեր, որոնք, ինչպես հայտնի է, չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Այդ պատճառով կրտսեր դպրոցականներից շատերը լուրջ դժվարություններ են ունենում հաղորդակցման գործընթացում: Շատերի խոսքում բացակայում են հաղորդակցման մշակույթի տարրական նորմերը:

Մեր օրերում հայ իրականության մեջ հաճախակի կարելի է հանդիպել կրտսեր դպրոցականի, ով չունի լիարժեք կապակցված խոսք, չի կարողանում ազատ և գրագետ հաղորդակցվել, անկաշկանդ չի ներգրավվում երկխոսության մեջ, չի կարողանում այն շարունակել և հասցնել ավարտին:

Վերը նշված հարցերի հրատապ լուծման անհրաժեշտությունից է բխում հիմնախնդրի արդիականությունը:

Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություններ կառուցելու կարողությունը:

Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, ձեռք բերել հաղորդակացական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն:

Անհրաժեշտ է հասնել նրան,որ աշակերտները գիտակցեն, թե յուրաքանչյուր մարդու կյանքում որքան կարևոր են որևէ լուր հաղորդելու, զրուցելու, հետաքրքիր պատմելու, հումորով խոսելու, որևէ առիթով ջերմ խոսքեր ասելու կարողությունները:

2□Խոսքի զարգացման մեթոդիկայի գիտական հիմքերը

Լեզուն ամենակատարյալ միջոցն է՝ մեր միտքը մեր զգայարաններն ու կամքն արտահայտելու: Ա□Բահաթրյան

Լեզուն և խոսքը հասարակական-պատմական զարգացման արդյունք են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը:

Լեզուն և խոսքը ծագել ու զարգացել են մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

«Խոսքի զարգացումը, նրա մշակումը, կատարելագործումը կատարվում է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից»:

Սովորողների խոսքի զարգացում ասելով՝ մեթոդիկայում առաջին հերթին նկատի է առնվում բանավոր և գրավոր ինքնուրույն գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումն ու զարգացումը:

Դեռևս վաղ մանկության տարիներին երեխայի մեջ ծագում է հաղորդակցման պահանջմունք, որը տարիների ընթացքում աստիճանաբար ընդլայնվում է: Խոսքի զարգացման բնագիտական հիմքը մարդու բարձրագույն նյարդային գործունեության երկու ազդանշանային համակարգի մասին Ի□Պ□Պավլովի տեսությունն է:

Խոսքի ֆիզիոլոգիական հիմքերն առարկաների, երևույթների և բառերի՝ մարդու վրա ունեցած ազդեցության շնորհիվ գլխուղեղի կեղևում առաջացող ժամանակավոր կապերն են, որոնցով այդ առարկաներն ու երևույթներն անվանվում են։
Պավլովը խոսքն առաջին հերթին դիտում էր որպես խոսքային օրգաններից ելնող կինեսթետիկ արձագանքներ։ Այդ կինեսթետիկ զգացումները նա անվանում էր երկրորդ ազդանշանային համակարգի հիմնական բաղադրիչը։

Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է նաև առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագոր -ծումը։

Խոսքը երևան է գալիս մարդու՝ այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջմունքից։ Այդ պատճառով երեխայի ներառումը սոցիալական միջավայրի մեջ և նրա սոցիալական կապերի պլանավորված ընկալումը համարվում են նրա խոսքի զարգացման հիմնական պայմաններից մեկը։ Երեխաների բանավոր խոսքի զարգացումն իրականանում է գործունեության ընթացքում և խոսքի զարգացման շարժիչ ուժը համարվում է հաղորդակցման անհրաժեշտությունը։

2□1□ Խոսքի տեսակները

Խոսքը կառուցվում է լեզվական համակարգի թելադրանքով, այն լեզվի հետ միասնության մեջ է։

3□ Բանավոր խոսք

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում: Պայմանավորված է խոսքային իրադրությամբ, հաղորդակցվողների փոխհարաբերու- թյամբ, խոսողի հոգեվիճակով և այլն: Կարևոր են նաև ուղեկցող միջոցները (միմիկա, շարժուձև և այլն):

Բանավոր խոսքի տեսակներն ըստ նշանակության□

1□ պատմողական

2□ նկարագրական

3□ դատողական

4□ գնահատող

4□ Բանավոր խոսքի զարգացում

Բանավոր խոսքը հանդես է եկել գրավորից վաղ՝ որպես հաղորդակցման անմիջական պահանջմունք։ Ի տարբերություն գրավոր խոսքի, որը յուրացվում է հատուկ ուսուցման ճանապարհով, բանավոր խոսքի ձևավորման փուլում այդ կարողության զարգացման ուղղությամբ հատուկ աշխատանքի կարիք չի զգացվում։

Անհրաժեշտ է դեռևս նախադպրոցական տարիքում իրականացնել երեխաների լեզվական հաղորդակցական կարողությունների զարգացման ծրագրավորված աշխատանք։ «Դեռևս երեք տարեկան երեխաները կարող են իրենց խոսքում թույլ տված սխալներն զգալ և ուղղել, նկատել ուրիշների սխալները□□□ Կարող են տարբեր խաղերի ժամանակ իրենց տարած դերին համապատաս- խան փոխել իրենց խոսքային վարքը և հաղորդակցման պայմաններին համապատասխան խոսքը հարմարեցնելու փորձեր կատարել, զգալ իրենց խոսքի հաջողությունն ու անհաջողությունը և անհրաժեշտություն դեպքում ոչ միայն կրկնել միտքը, այլև փոփոխել դրանք»։

Բանավոր խոսքին առաջադրվող պահանջները հանգում են մասնավորապես բառապաշարի, ձևակերպումների ըստ պատշաճի կիրառմանը, արտասանական նորմերի պահպանմանը, օտարաբանությունների, ժարգոնի, անհարկի բարբառայնության բացառմանը, լեզվական միջոցների ճիշտ ընտրությանը և այլն։

5 Բանավոր խոսքի զարգացման մեթոդները տարրական դասարաններում

Տարրական դասարաններում բանավոր խոսքի զարգացման համար կիրառվում են տարբեր մեթոդներ՝ զննական, խոսքային, գործնական։

Զննական մեթոդը կրտսեր դպրոցում հաճախ է կիրառվում։ Այս մեթոդի կիրառման ժամանակ երեխան զննում է տարբեր իրեր և բնութագրում դրանք, դիտում է նկարներ և դրանց շուրջ որևէ պատմություն հորինում։

Այս աշխատանքը կատարվում է բառապաշարի հարստացման և կապակցված խոսքի զարգացման նպատակներով։

Խոսքային մեթոդը ևս լայն կիրառություն ունի։ Այս մեթոդի կիրառման ժամանակ երեխան կարողանում է պատմել իր ընթերցածը անգիր սովորել չափածո ստեղծագործությունները։ Գործնական մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս հասկանալ, թե որքանով է զարգացել երեխայի բանավոր խոսքը և նա խոսքային վարժությունների լեզվական խաղերի, խաղ-բեմականացումների ժամանակ իրեն ինչպես է դրսևորում։

Խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները մայրենիի դասերի ժամանակ իրականացնում ենք ինչպես դասագրքերում տրված հարցերի ու առաջադրանքների, այնպես էլ մենախոսությունների և երկխոսությունների միջոցով։ Այս ամենը իրականացնում ենք, դերային խաղերի, բանավեճերի, հարցազրույցների միջոցով։

Դերային խաղերի իրականացման ժամանակ աշակերտներին առաջարկում ենք իրենց սովորած մի որևէ ստեղծագործությունից ընտրել հատվածներ և դերային խաղով ներկայացնել։

Օրինակ Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարը» հեքիաթից դերային խաղով ներկայացնում են Նազարի և Ուստիանի երկխոսությունը։

Հաճախակի կազմում ենք դասարանային շրջան։ Ամբողջ դասարանով որևէ խնդիր քննարկելիս նստում ենք շրջանով, որն օգնում է աշակերտներին անկաշկանդ, սրտաբաց, իրար աչքերի մեջ նայելով և համարձակ արտահայտել իրենց մտքերը։

Այսպիսի պայմաններում ստեղծվում է անմիջական մթնոլորտ, և աշակերտները համարձակ զրուցում են, ընդհատում իրար, հակադրվում։ Բացի այդ տեսնում են միմյանց դիմախաղերը, ժեստերը և դրանով ավելի են ներքաշվում խոսակցության, բանավեճի, զրույցի մեջ։

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք ենք տանում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ։ Բայց այսս աշխատանքն իրականացնում ենք ընդամենը տեքստի մակարդակում։ Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման համար նախատեսված են աշխատանքներ տարբեր ուղղություններով։

Այս աշխատանքները մենք իրականացնում ենք գործնական ճանապարհով։ Այսինքն դասագրքում զետեղված բնագրի շուրջ կատարում ենք բառային աշխատանք

1 Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում։

Օրինակ՝ բնագիրն ընթերցելուց հետո երեխան հանդիպում է այսպիսի հարցերի

ա/ Գտիր և կարդա այն բառերը, որոնք օգնեցին քեզ պատկերացնել աշնան գույները։

բ/ Ասա՛ այն բառերը, որոնցով հեղինակը բնութագրել է հերոսին։

գ/ Ո՞ր բառերն են քեզ հուշում, որ գարունը գալիս է։

2 Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտում ենք անծանոթ բառի նշանակությունը։ Տարրական դասարաններում սովորաբար տրվում են այսպիսի հարցեր

«Ո՞ր բառերից է կազմվել այս բառը» կամ «Ինչո՞ւ են այսպես անվանել ձնծաղիկ, տերևաթափ, լուսաբաց, դեղատուն»։

3 Բառերի համեմատում։

Այս աշխատանքի ժամանակ երեխաները համեմատում են նույնարմատ բառերը և բացատրում դրանց իմաստը։ Օրինակ՝ անտառ և անտառապահ, ծաղիկ և ծաղկավոր և այլն։

4 Բացատրություն կռահման ճանապարհով։

Այս աշխատանքի ժամանակ կարդում ենք անծանոթ բառ պարունակող նախադասություն և հարցնում աշակերտներին, թե ինչ է նշանակում այդ բառը։

5 Հականիշ բառերի ընտրություն։

Այս աշխատանքի ժամանակ երեխաները բնագրից ընտրում են բառեր և գտնում դրանց հակառակ իմաստն արտահայտող բառեր։

6 Մեկնաբանող նկարագրություն։

Բանավոր խոսքի զարգացման շրջաններում տարվող աշխատանքների ժամանակ կրտսեր տարիքի աշակերտներն ամենից շատ խուսափում են նկարագրությունները վերարտադրելուց։ Սակայն մենք հաճախակի ենք կատարում այդպիսի աշխատանքներ, քանի որ նկարագրական խոսքը հարուստ է ածականներով, մակդիրներով, համեմատություններով, որոնք էլ հարստացնում ու գեղեցկացնում են խոսքը։

Տարրական դասարաններում բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանք ենք իրականացնում բոլոր առարկաների դասերին ուսումնական երկխոսության սահմաններում։ Հենց այս բնական իրադրությունը, որի մեջ հայտնվում է աշակերտը, թույլ է տալիս նրան ազատ հաղորդակցվել, թե՛ ուսուցչի, թե՛ համադասարանցիների հետ։

6 Եզրակացություն

Այսպիսով, սովորողների խոսքի զարգացում ասելով՝ մեթոդիկայում առաջին հերթին նկատի է առնվում բանավոր ինքնուրույն գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորումն ու զարգացումը։ Հայտնի է, որ երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչ ուժը հաղորդակցման պահանջն է։ Շրջապատողների հետ հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններն են։ Այդ գործընթացում երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքը, այլ ակտիվորեն յուրացնում է այն՝ որպես համամարդկային փորձի մի մաս։ Ասվածից հետևում է, որ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է։

Անհրաժեշտ է, որքան հնարավոր է վաղ սկսել աշխատանքը խոսքի զարգացման ուղղությամբ, հասնել նրան, որ աշակերտները գիտակցեն, թե յուրաքանչյուր մարդու կյանքում որքան կարևոր են որևէ լուր հաղորդելու, զրուցելու, խոսքային շփումներ ստեղծելու, հետաքրքիր պատմելու, հումորով խոսելու, ջերմ խոսքեր ասելու կարողությունները։

Այսպիսով, բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանք պիտի իրականացվի բոլոր առարկաների դասերին ուսումնական երկխոսության սահմաններում։ Ուսումնական երկխոսությունն է հենց այն բնական իրադրությունը, որի մեջ հայտնվում է աշակերտը՝ այն կարող է լինել ինչպես ուսուցչի հետ, այնպես էլ համադասարանցիների հետ՝ ինչպես ուսումնական, այնպես էլ արտաուսումնական խնդիրների շուրջ։

Կարևոր հանգամանք է հանդիսանում այն, որ արդյունավոտ աշխատանքի գրավականը պիտի համարվեն ոչ թե սահմանումները, կանոնները սովորելը և վերարտադրելը, այլ խոսքային առաջադրանքների ճիշտ կատարման կարողությունը։

Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը, այլև իրերը, առարկաները նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը. . . : Ղ. Աղայան

7□ Գրականություն

1□ Ս□ Գ□ Աբրահամյան, «Աշակերտի խոսքի զարգացումը», Եր□, «Լույս», 1973թ□, էջ 75

2□ Ջ□ Գյուլամիրյան «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Եր□, Զանգակ-97, 2009թ□,

էջ 281, 289

3□ Цейтлин С□ Н□ «Маленькие лингвисты» СПБ, 2001, С□ 12

4□ Лернер И.Я., «Дидактические основы методов обучения» М□ 1981, с□ 34

5. Վ ի ք ի պե դ ի ա, ազ ատ հ ան ր ագ ի տար ան